ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
<<ԲԱԳՐԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>
ՊՈԱԿ

« _14_ » __06__ 2023թ.

Հասցե՝ Շիրակի մարզ, գ.Բագրավան

Հեռ. 094158383

ԿԶՆԱԿ հիմնադրամի
տնօրեն՝ Ա. Թորոսյանին

Հարգելի պարոն Թորոսյան

Ձեզ ենք ներկայացնում՝ ՀՀ Շիրակի մարզի «Բագրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչուհի Նվարդ Մկրտչյանի «Թատերական» խմբակ ծրագիրը:

«Բագրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ -ի

տնօրենի ժ/պ Գայանե Մկրտչյան

14.06.2023 թ.

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Կրթական աստիճան, սովորողների տարիքային խումբ/դասարան

Միջին և ավագ դպրոցներ, 12-17 տարեկաններ, 7-12-րդ դասարաններ

Սովորողների թիվ՝ 18

ԺԱՄԱՔԱՆԱԿ

Շաբաթական՝ 2 ժամ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

2023-2024 թթ. ուսումնական տարում Շիրակի մարզի , «Բագրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հիմք դնել թատերական խմբակի:

Խմբակում կընդգրկվեն 7-12-րդ դասարանի աշակերտներ և ենթակա լինի համալրման մինչև ուսումնական տարվա ավարտը: Խմբակին հատկացված 2 դասաժամերը կանցկացվի շաբաթական 1 օրում:

Թատերական խմբակի գործունեությունն իրականացվելու է ծնող-ուսումնական հաստատություն համագործակցության և փոխպայմանավորվածության միջոցով: Դասընթացների իրականացման, հաճախումների ապահովման համար պատասխանատու են երկկողմանի:

Խմբակի սաները պարբերաբար կբեմադրեն դրվագներ հայկական հեքիաթներից, մեծերի կյանքից և այլ ուսուցողական ու դաստիարակչական թեմաներով:Այն դեռահասներին կուսուցանի տարբերել չարն ու բարին, գնահատել գեղեցիկը ու արժևորել արվեստի գործիչներին:

ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. ***Ներկայացնել***՝ բեմական, գեղարվեստական և պաշտոնական խոսքի բաղադրիչները՝ տեխնիկան , տրամաբանական ընթերցանության կանոնները։

2. ***Զնավորել և զարգացնել***՝ կերպարի ամբողջականության ներքին և արտաքին շաժառիթները։

3. ***Նպաստել***՝ բեմում ինքնադրսևորվելու, դահլիճի հետ հաղորդակցվելու հմտություններին։

4. ***Արժևորել***՝ թատրոնի դերը որպես ամենաազդեցիկ գործիք, որով կարելի է ներգործել մարդու վրա , քանի որ հանդիսատեսը տեսնելով այն ինչ կատարվում է բեմի վրա նույնացնում է իրեն այս կամ այն կերպարի հետ, որի արդյունքում էլ տեղի է ունենում ***ինքնամաքրում***։ Սաներից շատերը թատրոնը դիտում են որպես ընտրած մասնագիտություն։

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Խմբակի անդամները կկարողանան՝

1. Թատերական արվեստի վերաբերյալ գիտելիքներ ձեռք բերել։
2. Դերասանական կարողություններ և հմտություններ ձեռք բերել։
3. Մասնագիտական ճիշտ կողմնորոշում ունենալ։
4. Զարգացնել կազմակերպչական կարողությունները։
5. Առօրյան նպատակահարմար և արդյունավետ կազմակերպել։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Պահանջվող նյութատեխնիկական բազա՝ բեմ , դեկորացիա, մասնագիտական գրականություն, կերպարներ ստանալու համար անհրաժեշտ միջոցներ և նյութեր՝ գրիմ , դիմակներ, կոսմետիկական մատիտներ և այլ ներկեր։

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ, ՀՂՈՒՄՆԵՐ

Լևոն Հախվերդյան <<Հայ թատրոնի պատմություն>>

Ռուբեն Մարուխյան <<Մեր թատրոնը>>

<<Համաշխարհային էկրանի կարակերգուները>> թարգմ.

Օլգա Գուլազյան <<Հուշեր>>

Արտավազդ Փաշայան

Գուրգեն Ջանիբեկյան << Իմ ընկերների մասին>>

ԾՐԱԳԻՐ/ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հ/Հ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ՆՊԱՏԱԿ	ԺԱՄԱՔԱՆԱԿ	Նշումներ
1.	Գրականությունը՝ որպես խոսքի արվեստ։	Տալ գաղափար գրականության մասին։ Հասկանալ և արժևորել սեփական մշակույթը , ճանաչել և արժևորել բարին , գեղեցիկը, վեհը։ Ծանոթանալ գրական սեռեր,	2 ժամ	

		ժանրեր, երկի կառուցվածք, կերպար եզրույթներին։		
2.	Առակներ , զրույցներ	Ձևավորել առակի ժանրին բնորոշ առանձնահատկություններ, առակի խրատական , դաստիարակիչ դերն ըմբռնելու, բարոյական դասեր քաղելու կարողություններ։ Արժևորել ազգային արժեքների պատմական, քաղաքական և մշակույթային նշանակությունը։ Ստեղծագործությունները դիտարկել որպես մեր ժողովրդի գոյատևման , զարգացման և առաջընթացի նախապայման։	2 ժամ	
3.	Դերասանի վարպետություն	Գործի դնել՝ երևակայությունը, ուշադրությունը, կերպարային մտածողությունը, մթնոլորտն ու խաղը, ոճը, ժեստը, արագ կողմնորոշումը՝ իմպրովիզացիա։	20 ժամ	
4.	Բեմական խոսք	Հնչյունների ճիշտ արտահայտություն, Շուտասելուկը որպես լեզվի վարժանք, Ձայնի մարզում, Խոսքի դինամիկա, Դադարներ՝, տրամաբանական , Հույզի, հոգեբանական ,	20 ժամ	

		ֆիզիոլոգիական , Խոսքի տակտեր:		
5.	Բեմական շարժում	Կեցվածք, Ձև, Մկանների ազատություն, Ճաշակ, Գեղեցկություն, Թեթևություն, Սահուն շարժումներ:	10 ժամ	
6.	Այց Թատրոններ (Տիկնիկային, դրամատիկաական, Կատակերգային, երգիծական)	Կենդանի շփում արվեստի ներկայացուցիչների, հայտնի դերասանների, երկիծաբանների հետ:	4 ժամ	
7.	Ռեժիսուրա	Բեմադրել հեքիաթներ, շուներ, հանդիսություններ, ծեսեր, միզամսցեն, երևակայական տարածք և ժամանակ:	8 ժամ	
8.	Ամփոփիչ դաս	Շիրվանզադե «Պատվի համար» ներկայացման բեմադրում /ավագ/ Մկրտիչ Կորյուն «Կարմիր գաթա» հեքիաթ -պիսեի բեմադրում	2 ժամ	

« Շիրակի մարզ Բագրավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
Նվարդ Մկրտչյան